

Х Р О Н И К А

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՄՐՐԵՆԻ ՄԿՐՅԱՆ

Հայաստանի ֆիմիական հասարակայնությունը ծանր կորուստ կրեց: Կյան-
ֆից հեռացավ օրգանական ֆիմիայի բնագավառի ճանաչված գիտնական, Պո-
լիմերների գիտահետազոտական ինստիտուտի հատուկ մոնոմերների արտա-
դրության տեխնոլոգիայի մշակման լաբորատորիայի վարիչ, ֆիմիական գի-
տությունների թեկնածու Գուրգեն Մամբրենի Մկրյանը:

Գ. Մ. Մկրյանը ծնվել է 1913 թ. Արևմտյան Հայաստանի Վան ֆաղաֆում,
ուսուցչի ընտանիքում: 1915 թ. Մկրյանների ընտանիքը տեղահանվում է և
ապաստան գտնում Նրևանում:

1939 թ. Գ. Մկրյանը փայտուն կերպով ավարտում է Նրևանի պոլիտեխնի-
կական ինստիտուտը և աշխատանքի անցնում ՀՍՍՀ գիտությունների ակա-
դեմիայի օրգանական ֆիմիայի ինստիտուտում, որտեղ և աշխատում է մինչև
1959 թ.: Գ. Մկրյանի այդ շրջանի գիտական մտքի արգասիքն է հանդիսանում
հեղուկ ամոնիակով պոլիհալոգեն էթանների դեմիդրոհալոգենացման նոր
ոնակցիայի հայտնագործումը: Այդ աշխատանքը հիմք հանդիսացավ նրա դի-
սերտացիայի համար, որը և հաջողությամբ պաշտպանեց 1944 թ.:

1959 թ. Գ. Մկրյանը հրավիրվում է ՍԿՀԳՀԻ Երևանյան մասնաճյուղ (այժմ
Պոլիմերների գիտահետազոտական ինստիտուտ) ու նշանակվում նոր կազմա-
կերպվող հատուկ մոնոմերների սինթեզման լաբորատորիայի վարիչ, որտեղ և
աշխատում է մինչև կյանքի վերջին օրերը:

Գ. Մկրյանի գիտական գործունեությունը սերտորեն կապված է հայրենա-
կան կառույցների ստացման գործին: Զարգացնելով դեմիդրոհալոգենացման ամո-
նիակային եղանակը, նա առաջարկեց 2,3-դիֆլուր-1,3-բուտադիենի ստացման
նոր արդյունաբերական եղանակ, որը հիմք հանդիսացավ մի շարք նոր օրակի
կառույցների և լատեֆսների արտադրության համար: Փլուր պարունակող էթի-
լենային և դիենային միացությունների փոխարեն պրոցեսների խոշոր ուտոմ-
նասիրությունը հնարավոր դարձրին փլուր պարունակող մի շարք մոնոմերների
նոր արդյունաբերական եղանակների մշակումը և ներդրումը:

Զնագեցած միացությունների ֆիմիայի բնագավառում մեծ ներդրում
հանդիսացավ Գ. Մ. Մկրյանի կողմից հայտնաբերած չհագեցած պարզ եթեր-
ների 1,4-ճեղքման ռեակցիան: Խորը ուսումնասիրելով նշված եթերների
ռեակցիան Գրինյարի ռեակտիվի հետ ցույց տվեց այդ ռեակցիայի ռադիկա-
լային մեխանիզմը: Ուշագրավ է ացետիլենային ֆիմիայի բնագավառում նրա
ուսումնասիրությունները, որոնք հանգեցրին մոնո-տեղակալված ացետիլենա-
յին միացությունների դիմերացման մեխանիզմի առաջարկմանը: Գիտական
հետախույզություն է ներկայացնում ացետիլենային միացությունների փոխար-
են ռեակցիան երկաթծեֆ պղնձի փոքրիկով:

Գ. Մկրյանը հեղինակ է 160-ից ավելի գիտական հոդվածների և հեղինա-
կային իրավունքների: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է մի
շարք դիսերտացիաներ:

Գ. Մկրյանը պարգևատրվել է «Պատվո ճան» շքանշանով և մի շարք մե-
դալներով:

Բեղմնավոր գիտնականի, ազնիվ և բյուսեղյա մաքրության հոգու տեր
մարդու հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում: